



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
(Հայարտոնագիր)

Արդյունաբերական սեփականություն

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

No 2 (6)

Патентное управление Республики Армения
(Армпатент)

**ПРОМЫШЛЕННАЯ
СОБСТВЕННОСТЬ**

Официальный бюллетень

Սույն տեղեկագրում զետեղված տեղեկությունները համարվում են
հրապարակված 1998 թվականի սեպտեմբերի 14-ից

Երեւան 1998

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ՓԱՏԱԹՂԹԵՐ	5, 191
Հայարտոնագրի գանգատարկման խորհուրդ գանգատների ներկայացման եւ դրանց քննարկման կարգը	7, 193
Գյուտի (օգտակար սարքի) ճշգրտված նկարագրությունը նախապատրաստելու եւ ներկայացնելու մասին հրահանգը.....	13
ԳՅՈՒՏԵՐ	15, 199
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին	17, 201
ՕԳՏԱԿԱՐ ՍԱՐՔԵՐ	75, 211
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին	77, 213
ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ	79
Տեղեկություններ գրանցված ապրանքային եւ սպասարկման նշանների մասին	81
ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ	177
Տեղեկություններ գրանցված ապրանքների ծագման տեղանունների մասին	179
Տեղեկություններ տրված ապրանքների ծագման տեղանունների օգտագործման իրավունքի վկայականների մասին	179
ՑՈՒՑԻՉՆԵՐ	181
ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	185
ԵՐԿՏԱՐ ԿՈՂԵՐԸ	215

Հրատարակվում է Հայարտոնագրի կողմից 1995թ.

Издается Армпатентом с 1995 г.

375010, Երեւան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3
Հեռ. 563 258 ընդհանուր բաժին
Հեռ. 580 631 տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին
E-mail: patent@arminco.com

375010, Ереван, Главный проспект, Дом Правительства 3
Тел. 563 258 общий отдел
Тел. 580 631 отдел информационных технологий
E-mail: patent@arminco.com

СОДЕРЖАНИЕ**CONTENTS**

ЗАКОНОДАТЕЛЬНЫЕ И НОРМАТИВНЫЕ ДОКУМЕНТЫ	5, 191	LEGISLATIVE AND NORMATIVE DOCUMENTS
Порядок подачи возражений и их рассмотрения в Апелляционном совете Армпатента	7, 193	Procedure for filing and discussion of appeals at the Board of Appeal of Armpatent
Инструкция по подготовке и представлению откорректированного описания изобретения (полезной модели)	13	Instruction on filing and preparation of corrected description of an invention (utility model)
ИЗОБРЕТЕНИЯ	15, 199	INVENTIONS
Сведения о выданных патентах	17, 201	Information on granted patents
ПОЛЕЗНЫЕ МОДЕЛИ	75, 211	UTILITY MODELS
Сведения о выданных патентах	77, 213	Information on granted patents
ТОВАРНЫЕ ЗНАКИ	79	TRADE MARKS
Сведения о зарегистрированных товарных знаках и знаках обслуживания	81	Information on registered trade marks and service marks
НАИМЕНОВАНИЯ МЕСТ ПРОИСХОЖДЕНИЯ ТОВАРОВ	177	APPELATION OF ORIGIN
Сведения о зарегистрированных наименованиях мест происхождения товаров	179	Information on registered appellation of origin
Сведения о выданных свидетельствах на право использования зарегистрированных наименований мест происхождения товаров	179	Information about granted certificates on right of use of appellation of origin
УКАЗАТЕЛИ	181	INDEXES
СООБЩЕНИЯ	185	REPORTS
ДВУБУКВЕННЫЕ КОДЫ	215	TWO-LETTER CODES

**ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ
ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ
ՓԱՍՏԱԹՂԹԵՐ**

Գրանցված է
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
№ 36980085, 24.02.1998թ.

ԿԱՐԳ

Հայարտոնագրի գանգատարկման խորհուրդ գանգատների ներկայացման եւ դրանց քննարկման

1. Ընդհանուր դրույթներ

Սույն կարգը սահմանված է Հայարտոնագրի գանգատարկման խորհրդի կանոնադրության 1.3 կետին համապատասխան եւ նախատեսված է կարգավորել արդյունաբերական սեփականության օբյեկտների իրավական պաշտպանության հետ կապված գանգատների ներկայացման եւ քննարկման հետ կապված հարցերը:

2. Գանգատարկման խորհուրդ ներկայացվող գանգատները

Հայարտոնագրի գանգատարկման խորհուրդ (այսուհետ՝ նաեւ խորհուրդ) կարող են ներկայացվել հետեւյալ գանգատները:

2.1. Գյուտի, օգտակար սարքի, արդյունաբերական նմուշի արտոնագիր չտալու մասին նախնական փորձաքննության որոշման վերաբերյալ:

2.2. Ապրանքային կամ սպասարկման նշանի (այսուհետ՝ ապրանքային նշան) գրանցման, ապրանքի ծագման տեղանվան գրանցման եւ(կամ) օգտագործման իրավունքի վկայական ստանալու հայտը քննարկման չընդունելու մասին նախնական փորձաքննության որոշման վերաբերյալ:

2.3. Գյուտի արտոնագիր չտալու մասին վերջնական փորձաքննության որոշման վերաբերյալ:

2.4. Ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին հայտարկվող նշանի փորձաքննության որոշման վերաբերյալ, այդ թվում՝ նշանը չգրանցելու մասին վերջնական մերժումները*, որոնք ընդունվել են հայտարկվող նշանի փորձաքննության արդյունքում՝ ըստ Մադրիդյան համաձայնագրի 5 հոդվածի 1-ին, 2-րդ եւ 5-րդ կետերի:

2.5. Ապրանքի ծագման տեղանվան գրանցումը մերժելու եւ (կամ) դրա օգտագործման իրավունք չտալու մասին հայտարկվող տեղանվան փորձաքննության որոշման վերաբերյալ:

2.6. Ֆիրմային անվանման գրանցումը մերժելու մասին փորձաքննության որոշման վերաբերյալ:

2.7. Ապրանքային նշանը գրանցելու մասին հայտարկվող նշանի փորձաքննության որոշման վերաբերյալ, այդ թվում՝

ա) ապրանքային նշանի մեկ կամ մի քանի տարրերը փորձաքննության կողմից պաշտպանությունից հանելու դեպքում.

բ) ապրանքային նշանի գրանցման ընթացքում հայտատուի ներկայացրած ապրանքների ցանկը փորձաքննության կողմից փոփոխվելու դեպքում:

2.8. Գյուտի, օգտակար սարքի, արդյունաբերական նմուշի արտոնագիր տալու դեմ:

2.9. Ապրանքային նշանի գրանցման դեմ, այդ թվում՝ Մադրիդյան համաձայնագրի 5 հոդվածի 6-րդ կետին համապատասխան:

2.10. Ապրանքի ծագման տեղանվան գրանցման եւ(կամ) տեղանվան օգտագործման իրավունքի վկայական տալու դեմ:

3. Գանգատների ներկայացման պայմանները

3.1. Սույն կարգի 2.1-2.7 կետերին համապատասխան գանգատը ներկայացվում է հայտատուի կողմից անմիջականորեն կամ նրա ներկայացուցչի միջոցով:

Սույն կարգի 2.8-2.10 կետերին համապատասխան գանգատը ներկայացվում է ցանկացած անձի կողմից անմիջականորեն կամ նրա ներկայացուցչի միջոցով:

Հայաստանի Հանրապետությունից դուրս ապրող ֆիզիկական անձինք եւ օտարերկրյա իրավաբանական անձինք կամ նրանց արտոնագրային հավատարմատարները գանգատների ներկայացման հետ կապված գործերը վարում են Հայարտո-

* Մադրիդյան համաձայնագրին համապատասխան

նագրում գրանցված արտոնագրային հավատարմատարների միջոցով:

Գանձատարկողի ներկայացուցչի (այդ թվում՝ արտոնագրային հավատարմատարի) միջոցով ներկայացվող գանձատին կցվում է ԴԴ օրենսդրությանը համապատասխան ձեւակերպված լիազորագիրը:

3.2. Գանձատում նշվում են՝ գյուտի, օգտակար սարքի, արդյունաբերական նմուշի, ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, ապրանքի ծագման տեղանվան հայտի համարը, իսկ պաշտպանական փաստաթղթի վիճարկման դեպքում արտոնագրի եւ (կամ) գրանցման վկայականի համարը, գանձատարկողի ազգանունը, անունը, հայրանունը կամ ձեռնարկության լրիվ անվանումը եւ նամակագրության հասցեն:

3.3. Սույն կարգի 2.1 կետին համապատասխան գանձատը ներկայացվում է հայտատուի կողմից որոշումն ստանալու օրվանից երկամսյա ժամկետում:

Սույն կարգի 2.2-2.5 եւ 2.7 կետերին համապատասխան գանձատը ներկայացվում է հայտատուի կողմից որոշումն ստանալու օրվանից եռամսյա ժամկետում:

Սույն կարգի 2.6 կետին համապատասխան գանձատը ներկայացվում է հայտատուի կողմից որոշումն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում:

3.4. Սույն կարգի 2.8 կետին համապատասխան գանձատը ներկայացվում է արտոնագրի գործողության ամբողջ ժամկետում:

Սույն կարգի 2.9 կետին համապատասխան, ապրանքային նշանի գրանցման դեմ գանձատը ներկայացվում է ապրանքային նշանի գրանցման գործողության ամբողջ ժամկետում՝ «Ապրանքային եւ սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների» մասին ԴԴ օրենքի(այսուհետ՝ Ապրանքային նշանների մասին օրենք) 3 եւ 11 հոդվածներով սահմանված պահանջների խախտման դեպքում եւ ապրանքային նշանի գրանցման մասին տեղեկությունները պաշտոնական տեղեկագրում հրապարակելու օրվանից 5 տարվա ընթացքում՝ նույն օրենքի 12 հոդվածի համաձայն:

3.5. Գանձատին կցվում է սահմանված չափով տուրքի վճարման անդորրագիրը:

Առանց սահմանված տուրքի վճարման անդորրագրի գանձատը քննարկման չի ընդունվում:

3.6. Սույն կարգի 3.3 կետով սահմանված ժամկետները խախտելու դեպքում գանձատը կարող է քննարկման ընդունվել բաց թողած ժամկետների վերականգնման մասին խնդրագրի առկայության դեպքում: Խնդրագիրը ներկայացվում է գանձատի հետ միաժամանակ, որպես դրա բաղկացուցիչ մաս կամ գանձատին կից հավելվածի տեսքով:

Գյուտի, օգտակար սարքի, արդյունաբերական նմուշի հայտով փորձաքննության որոշ-

մանը վերաբերող գանձատի ներկայացման բաց թողած ժամկետների վերականգնման մասին խնդրագիրը ներկայացվում է ժամկետի ավարտման օրվանից ոչ ավելի, քան վեց ամսվա, իսկ ապրանքային նշանին վերաբերող խնդրագիրը՝ երեք ամսվա ընթացքում:

Այս դեպքում գանձատի եւ խնդրագրի հետ միասին պետք է ներկայացվի բաց թողած ժամկետների վերականգնման համար սահմանված տուրքի վճարման անդորրագիրը:

Առանց բաց թողած ժամկետների վերականգնման համար սահմանված տուրքի վճարման անդորրագրի գանձատը քննարկման չի ընդունվում:

3.7. Հայտատուի խնդրանքով, ավելորդ մուծված տուրքի գումարը կարող է վերադարձվել հայտատուին կամ սահմանված կարգով հաշվի առնվել այլ տուրքերի վճարման ժամանակ:

3.8. Սույն կարգի 2.1-2.7 կետերին համապատասխան գանձատը պետք է պարունակի փորձաքննության որոշման անձշտությունը հաստատող փաստարկներ, վերաբերի գյուտի, օգտակար սարքի, արդյունաբերական նմուշի, ապրանքային նշանի, ապրանքի ծագման տեղանվան մեկ հայտի եւ ներկայացվի երկու օրինակից:

3.9. Սույն կարգի 2.8-2.10 կետերին համապատասխան գանձատը պետք է պարունակի պաշտպանական փաստաթուղթը եւ (կամ) գրանցումը ամբողջովին կամ մասնակիորեն անվավեր ճանաչելու հիմքերի առկայությունը հաստատող փաստարկներ, վերաբերի մեկ պաշտպանական փաստաթղթի եւ (կամ) մեկ գրանցման ու ներկայացվի երկու օրինակից:

3.10. Սույն կարգի 2.8 կետին համապատասխան գանձատը պետք է պարունակի «Արտոնագրերի մասին» ԴԴ օրենքի 30 հոդվածի 1-ին մասի «ա», «բ» եւ (կամ) «գ» կետերով սահմանված հիմքերի առկայությունը հաստատող փաստարկներ:

3.11. Սույն կարգի 2.9 եւ 2.10 կետերին համապատասխան գանձատը պետք է պարունակի Ապրանքային նշանների մասին օրենքի 28 եւ 42 հոդվածներով սահմանված հիմքերի առկայությունը հաստատող փաստարկներ:

4. Գանձատի ընդունումը եւ գրանցումը

4.1. Որպես գանձատ քննարկման է ընդունվում սույն կարգի 2, 3.1-3.4 եւ 3.8-3.11 կետերով սահմանված պահանջներին բավարարող գրավոր դիմումը:

4.2. Խորհուրդ ներկայացված գանձատը գրանցվում է, եւ դրան տրվում է մտից համար:

4.3. Գանձատի ստացման օրվանից մեկամսյա ժամկետում գանձատարկողին ուղարկվում է ծանուցագիր գանձատը քննարկման ընդունելու մասին, որի մեջ նշվում է խորհրդի կոլեգիայի նիստում գանձատի քննարկման թվականը:

Սույն կարգի 2.8-2.10 կետերին համապա-

տասխան գանգատը քննարկման ընդունելու մասին ծանուցագիր է ուղարկվում նաև վիճարկվող պաշտպանական փաստաթղթի սեփականատիրոջը՝ կցելով դրան գանգատի պատճենը՝ վիճարկման վերաբերյալ իր նկատառումները ներկայացնելու առաջարկությամբ, ինչը կարող է արվել ոչ ուշ, քան կոլեգիայի նիստի անցկացման օրվանից 10 օր առաջ:

Ապրանքային նշանի սեփականատիրոջը, որի նշանը գրանցվել է նշանների միջազգային գրանցման Մադրիդյան համաձայնագրի համաձայն, վերը նշված ծանուցագիրը ուղարկվում է անմիջականորեն նշանի սեփականատիրոջ հասցեով: Ընդ որում նշվում է, որ վիճարկվող գրանցման գործողության վերաբերյալ նա կարող է ներկայացնել իր նկատառումները, գանգատի քննարկման հետ կապված գործերը վարելով Հայարտոնագրում գրանցված արտոնագրային հավատարմատարների միջոցով:

Կոլեգիայի բոլոր ծրագրված նիստերի անցկացման ժամկետների մասին խորհուրդը տեղեկացնում է Հայարտոնագրի համապատասխան փորձաքննական ստորաբաժանմանը (այսուհետ՝ փորձաքննության բաժին):

4.4. Այն դեպքում, երբ խորհուրդը ներկայացված դիմումը չի համապատասխանում սույն կարգի 3.1-3.4 կետերով սահմանված պահանջներին, բացառությամբ 3.1 կետի 4-րդ մասով նախատեսված լիազորագրի ձեւակերպմանը վերաբերող պահանջների, դիմումի ստացման օրվանից ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում գանգատարկողին ծանուցագիր է ուղարկվում այն մասին, որ ստացված դիմումը որպես գանգատ քննարկման ենթակա չէ: Այն դեպքում, երբ դիմումը չի համապատասխանում սույն կարգի 3.8-3.11 կետերով, 3.1 կետի 4-րդ պարբերությամբ նախատեսված պահանջներին, դիմումի ստացման օրվանից մեկամսյա ժամկետում գանգատարկողին ուղարկվում է հարցում՝ այն ստանալու օրվանից եռամսյա ժամկետում դիմումը որպես գանգատ քննարկելու համար անհրաժեշտ տեղեկություններ ներկայացնելու առաջարկությամբ:

Պահանջված տեղեկությունները ժամանակին ներկայացնելու դեպքում, գանգատի ստացման օրվանից է համարվում խորհրդի կողմից դրանցից վերջինի ստացման օրվանը, ընդ որում սույն կարգի 4.3 կետի համաձայն, մեկ ամսվա ընթացքում գանգատարկողին ուղարկվում է ծանուցագիր՝ գանգատը քննարկման ընդունելու մասին:

Նշված եռամսյա ժամկետում պահանջված տեղեկությունները չներկայացնելու դեպքում, դիմումը որպես գանգատ քննարկման չի ընդունվում, ինչի մասին խորհուրդը, հարցումն ուղարկելու օրվանից հինգ ամիսը լրանալուն պես, ծանուցում է գանգատարկողին:

4.5. Սույն կարգի 4.3 եւ 4.4 կետերում նշված ծանուցումները եւ հարցումներն ստորագրում է խորհրդի նախագահը կամ նրա տեղակալը:

5. Գանգատի քննարկման ժամկետները

5.1. Սույն կարգի 2.1 կետին համապատասխան գանգատը քննարկվում է դրա ստացման օրվանից երկամսյա ժամկետում:

Սույն կարգի 2.2-2.7 եւ 2.9-2.10 կետերին համապատասխան գանգատը քննարկվում է դրա ստացման օրվանից եռամսյա ժամկետում:

Սույն կարգի 2.8 կետին համապատասխան գանգատը քննարկվում է դրա ստացման օրվանից 6-ամսյա ժամկետում:

5.2. Ցանկացած անձ, որին ուղարկվել է գանգատը քննարկման ընդունելու մասին ծանուցագիր, սույն կարգի 4.3 կետի համաձայն, կարող է դիմել խորհուրդ՝ կոլեգիայի նիստի անցկացման ժամկետների տեղափոխման խնդրանքով, սույն կարգի 4.1 կետին համապատասխան ժամկետների սահմաններում:

Դիմումը ներկայացվում է գրավոր, եւ դրա բավարարման դեպքում նշանակվում է կոլեգիայի նիստի անցկացման նոր թվական, ինչի մասին ծանուցվում են գանգատի քննարկման բոլոր մասնակիցները:

Կողմերից մեկի խնդրանքով եւ քննարկման բոլոր մասնակիցների համաձայնությամբ, գանգատի քննարկման սկիզբը կարող է հետաձգվել ոչ ավելի, քան վեց ամսով, սկսած սույն կարգի 5.1 կետով սահմանված ժամկետի ավարտի օրվանից:

6. Գանգատի քննարկումը խորհրդի կոլեգիայի նիստում

6.1. Գանգատը քննարկվում է խորհրդի կոլեգիայի նիստում, քննարկմանը մասնակցող անձանց պարտադիր ներկայությամբ:

Կոլեգիայի կազմում չպետք է ընդգրկվեն գանգատարկողի կամ փորձաքննության բաժնի վիճարկվող որոշում ընդունած փորձագետի հետ ազգակցական կապեր ունեցող անձինք, ինչպես նաև փորձաքննության վիճարկվող որոշման ընդունմանը ուղղակի կամ անուղղակի մասնակցած անձինք:

6.2. Գանգատի քննարկմանը կարող են մասնակցել՝ գանգատարկողը, պաշտպանական փաստաթղթի սեփականատերը եւ (կամ) նրանց լիազորած ներկայացուցիչը եւ փորձաքննության բաժնի ներկայացուցիչները:

Հայարտոնագրի աշխատակիցները չեն կարող լինել նշված անձանց ներկայացուցիչներ:

6.3. Ցանկացած մասնակից, անհրաժեշտության դեպքում, կարող է կողմնակի կազմակերպությունից մասնագետներ հրավիրել գանգատի քննարկմանը մասնակցելու համար:

Այն հայտերով, որոնց մասին դեռևս տեղեկությունները չեն հրապարակվել, կողմնակի

կազմակերպություններից մասնագետների հրավիրումը հնարավոր է միայն հայտատուի համաձայնության դեպքում:

6.4. Քննարկման մասնակիցները իրավունք ունեն նախօրոք ծանոթանալ գործի նյութերին, դրանցից քաղվածքներ եւ պատճեններ անել, իսկ քննարկման ընթացքում՝ հարցեր տալ մյուս մասնակիցներին եւ կոլեգիայի անդամներին, խնդրագրեր ներկայացնել, տալ բանավոր եւ (կամ) գրավոր պարզաբանումներ քննարկվող հարցի էության վերաբերյալ, որոնք կցվում են կոլեգիայի նիստի արձանագրությանը:

6.5. Կոլեգիայի նիստի անցկացման տեղի եւ թվականի մասին ծանուցում ստացած մասնակցի նիստին չներկայանալը չի խոչընդոտում գանգատի քննարկմանը:

Սակայն կոլեգիան իրավասու է մասնակիցներից որեւէ մեկի չներկայանալու դեպքում հետաձգել նիստը, անհնար համարելով գանգատի քննարկումը տվյալ նիստի ընթացքում:

6.6. Կոլեգիայի նիստը հետաձգելու կամ այն կրկին անգամ անցկացնելու անհրաժեշտության դեպքում նիստի անցկացման նոր ժամկետը կարող է նշանակվել ոչ շուտ, քան առաջինից մեկ ամիս անց, հետաձգելով նաեւ գանգատի քննարկման ժամկետը, ինչը պետք է համաձայնեցվի գանգատարկողի հետ:

6.7. Նիստը դեկավարում է կոլեգիայի նախագահը, ապահովելով գանգատի ամբողջական, բազմակողմանի եւ անկողմնակալ քննարկումը: Նախագահողը բացում է կոլեգիայի նիստը, ներկայացնում է կոլեգիայի անդամներին եւ քննարկմանը մասնակցող անձանց:

6.8. Քննարկման յուրաքանչյուր մասնակից կարող է բացարկ հայտարարել կոլեգիայի ցանկացած անդամի(անդամների)՝ սույն կարգի 6.1. կետում նշված պատճառների հիման վրա: Բացարկը պետք է լինի պատճառաբանված եւ հայտարարվի գործի ըստ էության քննարկումից առաջ:

Բացարկը քննարկվում է կոլեգիայի անդամների կողմից, եւ այն բավարարելու դեպքում նշանակվում է կոլեգիայի նոր կազմ, որը որոշում է գանգատի քննարկման նոր ժամկետը:

6.9. Գանգատի ըստ էության քննարկումն սկսվում է նախագահողի կամ կոլեգիայի անդամներից մեկի զեկուցումով:

Գործի հետագա քննարկումը կատարվում է հետեւյալ հաջորդականությամբ՝

ա) գանգատարկողի եւ (կամ) նրա ներկայացուցչի ելույթը.

բ) փորձաքննության բաժնի ներկայացուցչի ելույթը.

գ) արտոնագրատիրոջ (ապրանքային նշանի սեփականատիրոջ) ելույթը պաշտպանական փաստաթղթի վիճարկման դեպքում.

դ) կողմերի պատասխանները կոլեգիայի անդամների հարցերին:

6.10. Գործի էության քննարկման ընթացքում կոլեգիան սահմանափակվում է փորձաքննու-

թյան ընթացքում քննարկված նյութերով եւ լրացուցիչ որոնումներ չի կատարում:

6.11. Նոր ներկայացված տեղեկությունների վերաբերյալ ավելի մանրամասն հետազոտություններ կատարելու անհրաժեշտության դեպքում, կոլեգիայի որոշմամբ նիստը կարող է հետաձգվել սույն կարգի 6.6 կետի դրույթներին համապատասխան:

6.12. Կոլեգիայի նիստի ընթացքը արձանագրվում է, իսկ անհրաժեշտության դեպքում նաեւ ծայնագրվում մագնիսական ժապավենի վրա, ինչի մասին տեղեկացվում են բոլոր մասնակիցները: Արձանագրությունը կցվում է գործին:

6.13. Կոլեգիայի նիստի արձանագրությունը վարում է կոլեգիայի քարտուղարը, որը նշանակվում է նախագահողի կողմից՝ կոլեգիայի անդամներից:

6.14. Արձանագրության մեջ նշվում են՝ նիստի անցկացման թվականը.

կոլեգիայի անդամների եւ նիստի մասնակիցների ազգանունը, անունը, հայրանունը. նրանց առնչությունը քննարկվող հարցին.

քննարկվող հայտի, արտոնագրի եւ (կամ) նշանի վկայականի համարը եւ օբյեկտի անվանումը (նշանի պատկերը).

գործի գրանցման համարը. տեղեկություններ նիստի մասնակիցների մասին.

գանգատում կամ փորձաքննության որոշման մեջ բացակայող փաստարկների, խնդրագրերի կամ պարզաբանումների վերաբերյալ մասնակիցների դիմումների համառոտ շարադրանքը.

կոլեգիայի որոշման բանաձեւային մասը.

6.15. Քննարկմանը մասնակցող անձինք եւ կոլեգիայի անդամները կարող են արձանագրության մեջ մտցնել իրենց հատուկ կարծիքը կամ այն գրավոր ներկայացնել եռօրյա ժամկետում: Վերջինս գրանցվում է կցվում է կոլեգիայի նիստի արձանագրությանը:

6.16. Արձանագրությունը հրապարակվում է նախագահողը, եւ այն տրվում է կոլեգիայի անդամներին՝ ստորագրության:

7. Գանգատարկման խորհրդի որոշումները

7.1. Սույն կարգի 2.1–2.2 կետերին համապատասխան գանգատի քննարկման արդյունքում ընդունվում են հետեւյալ որոշումները՝

ա) գանգատը բավարարելու, նախնական փորձաքննության որոշումը չեղյալ ճանաչելու եւ գյուտի ժամանակավոր արտոնագիր տալու կամ հայտով գործավարությունը շարունակելու մասին.

բ) գանգատը բավարարելու, նախնական փորձաքննության որոշումը չեղյալ ճանաչելու եւ օգտակար սարքի կամ արդյունաբերական նմուշի արտոնագիր տալու մասին.

գ) գանգատը բավարարելու, նախնական

փորձաքննության որոշումը չեղյալ չանաչելու եւ ապրանքային նշանի, ապրանքի ծագման տեղանվան գրանցման եւ(կամ) օգտագործման իրավունքի հայտը քննարկման ընդունելու մասին:

դ) գանգատը մերժելու եւ նախնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու մասին:

7.2. Սույն կարգի 2.3 կետին համապատասխան գանգատի քննարկման արդյունքում ընդունվում են հետեւյալ որոշումները՝

ա) գանգատը բավարարելու, վերջնական փորձաքննության որոշումը չեղյալ ճանաչելու եւ գյուտի արտոնագիր տալու մասին:

բ) գանգատը մերժելու եւ վերջնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու մասին:

7.3. Սույն կարգի 2.4 կետին համապատասխան գանգատի քննարկման արդյունքում ընդունվում են հետեւյալ որոշումները՝

ա) գանգատը բավարարելու, հայտարկվող նշանի փորձաքննության որոշումը չեղյալ ճանաչելու եւ ապրանքային նշանը գրանցելու մասին:

բ) գանգատը մերժելու եւ փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու մասին:

7.4. Սույն կարգի 2.5 կետին համապատասխան գանգատի քննարկման արդյունքում ընդունվում են հետեւյալ որոշումները՝

ա) գանգատը բավարարելու, հայտարկվող տեղանվան փորձաքննության որոշումը չեղյալ ճանաչելու, ապրանքի ծագման տեղանունը գրանցելու եւ դրա օգտագործման իրավունք ընձեռելու մասին:

բ) գանգատը մերժելու եւ փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու մասին:

7.5. Սույն կարգի 2.6 կետին համապատասխան գանգատի քննարկման արդյունքում ընդունվում են հետեւյալ որոշումները՝

ա) գանգատը բավարարելու, փորձաքննության որոշումը չեղյալ ճանաչելու եւ հայտարկվող ֆիրմային անվանումը գրանցելու մասին:

բ) գանգատը մերժելու եւ փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու մասին:

7.6. Սույն կարգի 2.7 կետին համապատասխան գանգատի քննարկման արդյունքում ընդունվում են հետեւյալ որոշումները՝

ա) գանգատը բավարարելու, փորձաքննության որոշումը փոփոխելու եւ գանգատով նախատեսված փոփոխություններով՝ հայտարկվող նշանը գրանցելու մասին:

բ) գանգատը բավարարելու եւ հայտարկվող նշանի գրանցումը մերժելու մասին փորձաքննության որոշումը չեղյալ ճանաչելու մասին:

գ) գանգատը մերժելու եւ փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու մասին:

7.7. Սույն կարգի 2.8 կետին համապատասխան գանգատի քննարկման արդյունքում ընդունվում են հետեւյալ որոշումները՝

ա) գանգատն ամբողջովին կամ մասնակիորեն բավարարելու, արտոնագիր տալու մասին փորձաքննության որոշումը չեղյալ ճանաչելու կամ որոշումը փոփոխելու եւ պաշտպանա-

կան փաստաթուղթն ամբողջովին կամ մասնակիորեն անվավեր ճանաչելու մասին:

բ) գանգատը մերժելու եւ պաշտպանական փաստաթուղթն ուժի մեջ թողնելու մասին:

7.8. Սույն կարգի 2.9 կետին համապատասխան գանգատի քննարկման արդյունքում ընդունվում են հետեւյալ որոշումները՝

ա) գանգատը բավարարելու, ապրանքային նշանը գրանցելու մասին փորձաքննության որոշումը չեղյալ ճանաչելու կամ փոփոխելու եւ (կամ) նշանի գրանցումն ամբողջովին կամ մասնակիորեն անվավեր ճանաչելու մասին:

բ) գանգատը մերժելու եւ նշանի գրանցումն ուժի մեջ թողնելու մասին:

7.9. Սույն կարգի 2.10 կետին համապատասխան գանգատի քննարկման արդյունքում ընդունվում են հետեւյալ որոշումները՝

ա) գանգատը բավարարելու, ապրանքի ծագման տեղանվան գրանցման եւ(կամ) դրա օգտագործման իրավունք ընձեռելու մասին փորձաքննության որոշումը չեղյալ ճանաչելու եւ գրանցման եւ(կամ) ապրանքի ծագման տեղանվան օգտագործելու իրավունքի վկայականը անվավեր ճանաչելու մասին:

բ) գանգատը մերժելու եւ տեղանվան գրանցումը եւ(կամ) վկայականը ուժի մեջ թողնելու մասին:

8. Գանգատարկման խորհրդի որոշման ուժի մեջ մտնելը

8.1. Գանգատի քննարկումը կոլեգիայի նիստում(նիստերում) ավարտելու եւ արձանագրությունը ստորագրելու օրվանից մեկ ամսվա ընթացքում կոլեգիան խորհրդի անունից գանգատի վերաբերյալ ընդունում է հիմնավորված որոշում:

8.2. Կոլեգիան որոշումներ է ընդունում ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում կոլեգիայի ղեկավարի ձայնը վճռորոշ է:

8.3. Սահմանված ձեռով կազմված որոշումն ստորագրվում է կոլեգիայի բոլոր անդամների կողմից:

Կոլեգիայի ցանկացած անդամի հատուկ կարծիքը գրանցվում է որոշման մեջ, կոլեգիայի անդամների ստորագրություններից հետո կամ որոշման հավելվածում:

8.4. Խորհրդի որոշումը կցվում է գործին, իսկ դրա պատճենը՝ ոչ ուշ, քան որոշումն ընդունելուց 15 օր հետո ուղարկվում է գանգատարկողին, իսկ պաշտպանական փաստաթղթի վիճարկման դեպքում՝ նաեւ դրա սեփականատիրոջը:

8.5. Խորհրդի որոշումն ուժի մեջ է մտնում այդ որոշումը սույն կարգի 8.4 կետում նշված անձանց ուղարկելու օրվանից:

8.6. Խորհրդի որոշմանը չհամաձայնելու դեպքում կողմերից յուրաքանչյուրը կարող է դիմել դատարան:

9. Հետագա գործավարությունը

9.1. Գործի նյութերը վերադարձվում են փորձաքննության բաժին՝ ընդունված որոշմանը համապատասխան հետագա գործավարության համար:

9.2. Խորհրդի որոշումն ստանալու օրվանից մեկ ամսվա ընթացքում փորձաքննության բաժինը ընդունում է նոր, խորհրդի որոշմանը համապատասխան որոշում:

9.3. Գործը կոլեգիայի նիստի արձանագրության եւ խորհրդի որոշման պատճենի հետ միասին պահվում է խորհրդում, մինչեւ արդյունաբերական սեփականության օբյեկտների մասին ՀՀ համապատասխան օրենքով խորհրդի որոշումները դատարանում բողոքարկելու համար բոլոր սահմանված ժամկետների ավարտը:

Հաստատված է Հայարտոնագրի
1995թ. հոկտեմբերի 24-ի
№ 4 35 հրամանով

Լրախմբագրված տեքստը
հաստատված է Հայարտոնագրի 1997թ
նոյեմբերի 12-ի № 45 հրամանով

Գրանցված է
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
№ 369800141, 15.06.1998թ.

ՀՐԱՅԱՆԳ

գյուտի (օգտակար սարքի) ճշգրտված նկարագրությունը Նախապատրաստելու եւ ներկայացնելու մասին

1. Սույն հրահանգը նախատեսված է կարգավորելու «Արտոնագրերի մասին» ՀՀ օրենքի 23 եւ 24 հոդվածների համաձայն անցկացված գյուտի եւ օգտակար սարքի (այսուհետ՝ գյուտ) փորձաքննության հիման վրա արտոնագիր տալու մասին Հայարտոնագրի որոշմանը համապատասխան գյուտի ճշգրտված նկարագրության նախապատրաստման եւ ներկայացման հետ կապված հարցերը:

2. Գյուտի նկարագրության ճշգրտումը նկարագրության տեքստի, իսկ անհրաժեշտության դեպքում նաեւ գծագրերի համապատասխանեցումն է Հայարտոնագրի որոշմամբ տրված իրավական պաշտպանության ծավալին (հավակնության սահմանմանը) եւ օգտագործված տերմիններին:

3. Գյուտի նկարագրությունը ճշգրտում է հայտատուն, արտոնագիր տալու մասին Հայարտոնագրի որոշմանը համաձայնելու դեպքում, այն ստանալուց հետո:

4. Գյուտի ճշգրտված նկարագրությունը ներառում է գյուտի անվանումը եւ հետեւյալ բաժինները՝

տեխնիկայի բնագավառը, որին վերաբերում է գյուտը, եւ գյուտի օգտագործման նախընտրելի բնագավառը,

գյուտի խնդիրը,

գյուտի էությունը,

գյուտի օբյեկտի (առարկայի) եւ նրա աշխատանքի նկարագրությունը:

Ճշգրտված նկարագրությունը շարադրվում է բաժինների վերը նշված հերթականությամբ՝ չառանձնացնելով դրանք վերնագրերով:

5. Գյուտի անվանումը պետք է համընկնի Հայարտոնագրի որոշման մեջ նշված անվանման հետ:

«Տեխնիկայի բնագավառը» բաժինը նախընտրելի է շարադրել հետեւյալ սխեմայով՝ «Գյուտը վերաբերում է ..., մասնավորապես ... եւ կարող է կիրառվել...»:

«Գյուտի խնդիրը» բաժինը նախընտրելի է

սկսել. «Գյուտի խնդիրն է...» բառերով, որտեղ պետք է բերվի տեխնիկական այն արդյունքը, որի ստացումը ապահովում է սույալ գյուտը, այդ թվում մասնավոր դեպքերում, իրականացման կոնկրետ ձեւերում կամ օգտագործման հատուկ պայմաններում:

«Գյուտի էությունը» բաժնում բերվում են գյուտի բոլոր այն հատկանիշները, որոնց ամբողջությունն ապահովում է դրված խնդրի լուծումը: Բերված հատկանիշները պետք է համապատասխանեն Հայարտոնագրի որոշման մեջ նշված հատկանիշներին եւ նույնպես պետք է բաժանված լինեն երկու խմբի՝ սահմանափակիչ հատկանիշների եւ տարբերակիչ հատկանիշների: Բաժինը նախընտրելի է շարադրել հետեւյալ սխեմայով՝ «Գյուտի էությունն այն է, որ (օբյեկտում), որն ունի կամ ըստ որի ... (բերվում են սահմանափակիչ հատկանիշները) ... , գյուտի համաձայն ... (բերվում են տարբերակիչ հատկանիշները):»

«Գյուտի օբյեկտի եւ նրա աշխատանքի նկարագրությունը» բաժնի կառուցվածքը կրկնում է գյուտի նկարագրության այն բաժնի կառուցվածքը, որի հիման վրա Հայարտոնագիրն անցկացրել է գյուտի փորձաքննությունը: Այդ նկարագրությունից պետք է հանվեն այն մասերը, որոնք բացահայտում են Հայարտոնագրի փորձաքննության արդյունքով պաշտպանության ծավալից հանված հատկանիշները: Ճշգրտված նկարագրությունում պետք է օգտագործվեն այն նույն տերմինները, որոնք կան Հայարտոնագրի որոշման մեջ: Եթե հանվել կամ փոփոխվել են գծագրերի, պատկերների կամ թվային նշանակումների մի մասը, ապա նկարագրությունում պետք է կատարվեն համապատասխան փոփոխություններ:

6. Գյուտի ճշգրտված նկարագրությունը հայտատուն ներկայացնում է Հայարտոնագիր մեկ օրինակից, թղթի վրա (բնագիր): Համակարգչային շարվածքի դեպքում ճշգրտված նկարագրությանը պետք է կցվի մագնիսական կրիչը (դիսկետը), որը 5-օրյա ժամկետում վերադարձվում է հայտատուին:

Տեքստային նյութերի ձեւակերպմանը ներկայացվող պահանջները նույնական են գյուտի հայտի նյութերի ձեւակերպմանը ներկայացվող պահանջներին:

Ճշգրտված նկարագրության յուրաքանչյուր թերթի վերին աջ անկյունում պետք է բերվի հայտի պետական գրանցման համարը, որը Հայարտոնագրի որոշման մեջ նշված է (21) ծածկագրով:

Հրապարակման ներկայացվող գծագրերը պետք է լիովին համապատասխանեն գյուտի ճշգրտված նկարագրությանը (տեքստին):

Գծագրերի ձեւակերպմանը ներկայացվող պահանջները նույնն են, ինչ գյուտի հայտի նյութերի ձեւակերպմանը ներկայացվող պահանջները:

Գծագրերի յուրաքանչյուր թերթի վերին աջ անկյունում պետք է նշվի հայտի պետական գրանցման համարը: Գյուտի անվանումը ճշգրտված գծագրերի վրա կարող է չտրվել:

7. Գյուտի ճշգրտված նկարագրությունը եւ գծագրերը Հայարտոնագիրը հրապարակում է հայտատուի ներկայացրած ծավալով, հայտատուի պատասխանատվությամբ:

Հաստատված է Հայարտոնագրի
1998թ. հունիսի 2-ի
№ 30 հրամանով

ԳՅՈՒՏԵՐ

**Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների
նույնականացման միջազգային կոդերը
ըստ ՄՄԻԿ ST.9 ստանդարտի**

- 11 արտոնագրի համարը
- 21 հայտի համարը
- 22 հայտի ստացման թվականը
- 23 լրացուցիչ նյութերի ստացման թվականով որոշված առաջնություն
- 24 թվականը, որից սկսվում է ԳԳ արտոնագրով վերապահված իրավունքների գործողությունը
- 31 առաջնային հայտի համարը
- 32 առաջնային հայտի ներկայացման թվականը
- 33 երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը
- 46 հավակնության սահմանման հրապարակման թվականը
- 51 միջազգային արտոնագրային դասակարգման (ՄՄԴ) ցուցիչը(ները)
- 54 գյուտի անվանումը
- 57 գյուտի հավակնության սահմանումը
- 62 ավելի վաղ ներկայացված հայտի համարը եւ ստացման թվականը, որից զատված է տվյալ հայտը
- 65 հայտին վերաբերող ավելի վաղ հրապարակված արտոնագրային փաստաթղթի համարը
- 71 հայտատու(ները), երկրի կոդը
- 72 գյուտի հեղինակը(ները), երկրի կոդը
- 73 արտոնագրատերը, հասցեն**, երկրի կոդը
- 74 արտոնագրային հավատարմատար
- 76 հեղինակը, որը նաեւ հայտատու եւ արտոնագրատեր է, հասցեն**, երկրի կոդը
- 86 միջազգային հայտի (PCT) համարը եւ ներկայացման թվականը
- (*) տվյալներ նախկին պաշտպանական այն փաստաթղթի մասին, որի հիման վրա տրվել է ԳԳ արտոնագիրը

Փաստաթղթի տեսակի կոդը

- A1 գյուտի արտոնագիր
- A2 գյուտի ժամանակավոր արտոնագիր
- B1 ԽՍՀՄ կամ ԽՍՀՄ նախկին սուբյեկտ հանդիսացող պետության պաշտպանական փաստաթղթի հիման վրա տրված արտոնագիր
- B2 նախապես ԳԳ ժամանակավոր արտոնագրով պաշտպանված գյուտի արտոնագիր

** ազգային արտոնագրատերերի դեպքում

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

- (51)⁶ **A47C 17/13** (11) **475 A1**
A47C 17/22
- (21) 96131 (22) 26.06.96
- (31) A2384/91 (32) 02.12.91 (33) DE
- (86) PCT/AT 92/00158 (02.12.92)
- (72) Հայնց Ֆրեմներ, AT
- (71) (73) Հոդդյու Մետալվարենֆաբրիք Ռ. Հոպպե
Գեգելշաֆթ ՄԲՀ ունդ Քո. ԿԳ, AT
- (74) Հ. Դավթյան
- (54) (57)

1. Մահճակալի կերպափոխվող **նստելակահույք**, որում պառկելու համար նախատեսված մակերեսային մի մասը կազմվում է երկու բարձից, որոնք նստելու դիրքի ժամանակ պահվում են դուրսքաշովի արկղում եւ տեղակայված են պաստառապատված մակերեսայիններով իրար վրա, ընդ որում վերին բարձն ունի դուրսքաշովի արկղի վրա տեղակայված հորիզոնական առնու շուրջը շրջադարձի հնարավորություն եւ ունի հետզցովի ոտիկ, իսկ ստորին բարձը հողակապակոր ֆուրնիտուրի միջոցով ունի դուրսքաշովի արկղում ուղղաձիգ տեղաշարժման հնարավորություն. *տարբերվում է* նրանով, որ հորիզոնական առնին տեղակայված է տեղաշարժման հնարավորությամբ՝ հիմնականում ուղղաձիգ ուղղորդչի միջոցով եւ շարժուն միացված է հողակապակոր ֆուրնիտուրին:

2. Մահճակալի կերպափոխվող **նստելակահույք** ըստ 1-ն կետի. *տարբերվում է* նրանով, որ հորիզոնական առնին կազմված է երկու կողային հողերով, որոնցից յուրաքանչյուրի մի բազուկը տեղակայված է դուրսքաշովի արկղի վրա տեղաշարժվելու հնարավորությամբ եւ լծակի միջոցով միացված է հողակապակոր ֆուրնիտուրի ըստ բարձրության տեղափոխվող համապատասխան տարրին:

3. Մահճակալի կերպափոխվող **նստելակահույք** ըստ 2-րդ կետի. *տարբերվում է* նրանով, որ յուրաքանչյուր լծակ փորակի միջոցով միացված է հողի համապատասխան բազուկին:

- (51)⁵ **A61B 5/04** (11) **476 A2**
- (21) 97038 (22) 07.05.97
- (72) Ա. Հովհաննիսյան, Ա. Գաբրիելյան, AM
- (71) (73) Երեւանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան, Երեւան, Կորյունի 2, AM
- (54) (57)

Էրիտրոցիտների ռեակտիվության որոշման եղանակ, ըստ որի կատարում են արյան մուշառում, դրա եւ քիմիական ազդանյութի միախառ-

նում եւ հեմոլիզի անցկացում. *տարբերվում է* նրանով, որ որպես քիմիական ազդանյութ օգտագործում են նատրիումի քլորիդի 0,9%-ոց ջրային լուծույթ, որին ավելացնում են 15mM ադաթթու եւ տրիպսին, իսկ էրիտրոցիտների ռեակտիվության աստիճանը որոշում են նույն հիվանդի արյան մուշառում 3-8 միլիմետրանոց պլիքներով ճառագայթված եւ ոչ ճառագայթված էրիտրոցիտների հեմոլիզի արագությունների հաստատունների հարաբերությամբ:

- (51)⁵ **A61B 17/00** (11) **477 A2**
- (21) 97100 (22) 30.10.97
- (76) Գազիկ Ջիլավյան, Արսեն Ստեփանյան, Երեւան, Կուզնեցովի 8/1, բն. 10, AM
- (54) (57)

Պարամետրիումների ցամաքեցման եղանակ ընդլայնված պանիստերէկտոմիայի դեպքում, ըստ որի պարամետրիումներում տեղադրում են երկու ցամաքեցնող խողովակ եւ արտանցում դրանք հեշտոցի ծայրատի բաց լուսանցքի միջով. *տարբերվում է* նրանով, որ լրացուցիչ տեղադրում են գստային առաջնային վերին կատարից ներքեւ եւ միջայնորեն, որովայնի առաջնային պատի միջով հետորովայնաձգորեն անցնող ցամաքեցնող խողովակներ:

- (51)⁵ **A61K 7/00** (11) **478 A1**
A61K 35/14
- (21) 000512 (22) 17.03.81
- (24) 23.06.94
- (31) 663/81 (32) 17.03.81 (33) HU
- (72) Լայոշ Սեւեշ, HU
- (71) (73) Հուման Օլգոանիագրերմելե Եշ Կուրատո Ինդեգեթ, HU
- (74) Ռ. Գետրգյան
- (54) (57)

1. **Մաշկի բջիջների վերականգնման հատկություն ունեցող բուսական լուծամզուքի ստացման եղանակ**, ըստ որի հումքը լուծահանում են մաքուր էթանոլով. *տարբերվում է* նրանով, որ լուծահանում են Rosaceae ընտանիքի Prunoideae, Rosaideae, Romaideae եւ Molaideae ենթաընտանիքին պատկանող բույսերի ծաղիկները, պտուղները, արմատները կամ կեղևը, Fagaceae, Caesalpinaceae եւ Chenopodiaceae ընտանիքի Rosae gallicae, Rosae multiflorae, Rosae chinsis, Rosae pendulinae, Rosae damosanoe տեսակի բույսերի ծաղիկները

արտաքին մասերը կամ *Spinosae Rubus idaei* կամ *Crataegi monogyenae*, *Crataegi oxyacanthae*, *Malus pumilae* պտուղների արտաքին մասերը եւ *Ratenschis* տեսակի բույսի կամ *Beta vulgaris* տեսակի բույսի արմատները եւ *Quercus roburis* կամ *Quercus petraeae* տեսակների կեղեւը, օգտագործելով 70-100% էթանոլ, իսկ լուծահանումը անցկացնում են 0-50°C ջերմաստիճանում, 3:1 մինչեւ 12:1 էթանոլի եւ բույսերի մասերի հարաբերակցությամբ, մինչեւ լուծամզուքի չոր նյութի պարունակության ավելացման դադարեցումը, ապա լուծամզուքը գտում են եւ, ավելացնելով էթանոլ, բույսերի լուծամզուքի չոր նյութի պարունակությունը հասցնում 0,01-0,1 զանգվ. %:

2. Եղանակն ըստ 1-ին կետի. *Գարբերվում է* նրանով, որ բույսերի մասերը լուծահանում են առանձին-առանձին, ապա միացնում ստացված լուծամզուքները:

3. Եղանակն ըստ 1-ին կամ 2-րդ կետի. *Գարբերվում է* նրանով, որ բույսերի ծաղիկները, արմատները, պտուղները կամ կեղեւը մինչեւ լուծահանումը մանրացնում են:

- (51)⁶ **A61K 9/52** (11) **479 A1**
- (21) 96289 (22) 17.09.96
- (31) 92/07249 (32) 16.06.92 (33) FR
- (86) PCT/FR 93/00582 (16.06.93)
- (72) Պատրիս Դեբրեժա, Ժերար Լեդյուր, FR
- (71) (73) Էթիֆարմ, ES
- (74) Է.Նահապետյան
- (54) **Օմեպրազոլի միկրոհատիկները եւ դրանց ստացման եղանակ**

(57) 1. Ստամոքսահյութի ներգործության նկատմամբ կայուն պոլիմերային պատվածքով օմեպրազոլի միկրոհատիկներ, որոնք պարունակում են շաքարից եւ օսլայից բաղկացած, պոլիմերային կոլոիդային շերտով չեզոք միջուկ եւ մաննիտի ու պոլիմերային պատվածքի հետ զուգակցված օմեպրազոլի ակտիվ շերտ. *Գարբերվում է* նրանով, որ ակտիվ շերտում օմեպրազոլի եւ մաննիտի հարաբերակցությունը հավասար է 1:1:

2. Միկրոհատիկներն ըստ 1-ին կետի. *Գարբերվում է* նրանով, որ օմեպրազոլի ակտիվ շերտը լրացուցիչ պարունակում է 10 զանգվ. % կարբօքսիմեթիլօսլա:

3. Միկրոհատիկներն ըստ 2-րդ կետի. *Գարբերվում է* նրանով, որ ակտիվ շերտը լրացուցիչ պարունակում է մատրիումի լաուրիլսուլֆատի տիպի 5 զանգվ. % մակերետութասակտիվ նյութ:

4. Միկրոհատիկներն ըստ 1-3-րդ կետերի. *Գարբերվում է* նրանով, որ ակտիվ շերտը լրացուցիչ պարունակում է հիդրօքսիպրոպիլմեթիլթադանթանյութի տիպի բարձր մածուցիկությամբ պոլիմերային կապակցանյութի օգնությամբ պատված մաննիտի շերտ:

5. Ստամոքսահյութի ներգործության նկատմամբ կայուն պոլիմերային պատվածքով օմեպրազոլի միկրոհատիկների ստացման եղանակ, ըստ որի պոլիմերային կոլոիդային կապակցանյութի առկայությամբ խառնում են օմեպրազոլը եւ մաննիտը, ապա այդ խառնուրդով պատում շաքարից եւ օսլայից բաղկացած չեզոք միջուկը, որից հետո պատում պոլիմերային պաշտպանական շերտով եւ ստամոքսահյութի ներգործության նկատմամբ կայուն պոլիմերային կապակցանյութի մեթոդով պատում մաննիտը չեզոք միջուկի պատումը իրականացնում են չոր եղանակով, բարձր մածուցիկությամբ հիդրօքսիպրոպիլմեթիլթադանթանյութի տիպի պոլիմերային կապակցանյութի, 80 զանգվ. % էթանոլի եւ 20 զանգվ. % ջրի լուծույթի օգնությամբ:

մամբ կայուն պոլիմերային պատվածքով օմեպրազոլի միկրոհատիկների ստացման եղանակ, ըստ որի պոլիմերային կոլոիդային կապակցանյութի առկայությամբ խառնում են օմեպրազոլը եւ մաննիտը, ապա այդ խառնուրդով պատում շաքարից եւ օսլայից բաղկացած չեզոք միջուկը, որից հետո պատում պոլիմերային պաշտպանական շերտով եւ ստամոքսահյութի ներգործության նկատմամբ կայուն պոլիմերային շերտով, ստացված փաթիլները լուծամզում են, չորացնում եւ չափաբերում. *Գարբերվում է* նրանով, որ օմեպրազոլով եւ մաննիտով չեզոք միջուկի պատումը իրականացնում են չոր եղանակով, բարձր մածուցիկությամբ հիդրօքսիպրոպիլմեթիլթադանթանյութի տիպի պոլիմերային կապակցանյութի, 80 զանգվ. % էթանոլի եւ 20 զանգվ. % ջրի լուծույթի օգնությամբ:

6. Եղանակն ըստ 5-րդ կետի. *Գարբերվում է* նրանով, որ պոլիմերային կապակցանյութի օգնությամբ օմեպրազոլի եւ մաննիտի պատումից հետո լրացուցիչ պատում են մաննիտի չեզոք պատվածքով:

7. Եղանակն ըստ 5-րդ կետի. *Գարբերվում է* նրանով, որ չոր խառնուրդի յուրաքանչյուր շերտի պատումից հետո իրականացնում են չորացում 35°-40°C ջերմաստիճանում, ակտիվ միկրոհատիկներում ջրի պարունակությունը մինչեւ 1 զանգվ. %, իսկ էթանոլի` մինչեւ 0.2 զանգվ. % նվազեցմանը հասնելու անհրաժեշտ ժամանակաընթացքում:

8. Եղանակն ըստ 5-րդ եւ 7-րդ կետերի. *Գարբերվում է* նրանով, որ չափաբերում են 0.7 - 0.9 մմ չափերով չեզոք միկրոհատիկների:

9. Եղանակն ըստ 5-8-րդ կետերի. *Գարբերվում է* նրանով, որ մաննիտի, օմեպրազոլի եւ ստամոքսահյութի ներգործությունից պաշտպանող պոլիմերային շերտի պատումն իրականացնում են հարթահատակ տուրբինում:

- (51)⁵ **A61K 31/41** (11) **480 A1**
- (21) 000649 (22) 08.12.89
- (24) 29.12.95
- (31) 285151 (32) 12.12.88 (33) US
- 335007 07.04.89 US
- (86) PCT/US 89/05599 (08.12.89)

(72) Բլեյկ Ֆիլիպ Հոլինգ, Դեբրա Էն Վիտկովսկի, US

(71) (73) ՖՄԿ Քորփորեյշն, US

(74) Հ. Մանուկյան

(54) **Կաթնասունների ուռուցքաբջջիջների քայքայման եղանակ, դեղագործական բաղադրանյութ կաթնասունների ուռուցքաբջջիջների քայքայման համար**

(57) 1. **Կաթնասունների ուռուցքաբջջիջների քայքայման եղանակ**, ըստ որի պորֆիրինի առկայությամբ դրանց վրա ազդում են լույսով. *Գարբերվում է* նրանով, որ բջջիջները, մինչեւ լույսով ազդելը, մշակում են պրոտապորֆիրինօքսիդազի ազդեցությամբ պրոտապորֆիրինոգենի պրոտա-

պորֆիրին IX-ը էնզիմատիկ կերպավորման յուրահատուկ արգելակիչով:

2. Եղանակն ըստ 1-ին կետի. *փարբերվում է* նրանով, որ արգելակիչներից օգտագործում են արիլտրիագոլինոն, կամ արիլտետրագոլինոն, կամ արիլտրիագինոլինոն, կամ արիլօքսիդիագոլ, արիլտետրահիդրոնիդագոլ, արիլտետրահիդրոֆտալիմիդ, կամ արիլիդանտոին, կամ արիլուրագոլ, կամ արիլիեքսահիդրոպիրիդագին, կամ արիլիետերոցիկլային ուրեթան, կամ ֆենօքսիֆենիլային միացություն, կամ արիլպիրագոլ, կամ




բանաձեռի միացություն, որտեղ X_b հանդիսանում է O կամ S, իսկ Ph՝ տեղակալված ֆենիլ:

3. Եղանակն ըստ 2-րդ կետի. *փարբերվում է* նրանով, որ արգելակիչը իրենից ներկայացնում է ջրալուծելի աղ, կամ թթվային միացություն, որի նատրիումական աղը ջրալուծելի է:

4. Եղանակն ըստ 1-3 կետերի. *փարբերվում է* նրանով, որ արգելակիչը պարունակում է արիլային խումբ, որի տեղակալիչը հանդիսանում է սուլֆոնիլամիդի կամ դրա ջրալուծելի աղի թթվային խումբ:

5. Եղանակն ըստ 1-4 կետերի. *փարբերվում է* նրանով, որ որպես արգելակիչ օգտագործում են



բանաձեռի միացություն:

6. Եղանակն ըստ 1 կետի. *փարբերվում է* նրանով, որ բջիջների մշակումը իրագործում են արգելակիչի per os ներմուծումով:

7. **Ղեղազործական բաղադրանյութ կաթնասունների ուռուցքաբջիջների քայքայման համար**, որը պարունակում է կենսաբանորեն ակտիվ միացություն եւ դեղազործորեն ընդունելի կրող. *փարբերվում է* նրանով, որ որպես կենսաբանորեն ակտիվ միացություն օգտագործված է պրոտապորֆիրինօքսիդագոլ պրոտապորֆիրինոգենից պրոտապորֆիրին ֆերմենտային կերպավորման յուրահատուկ արգելակիչ, որն ունի 1 մկմ-ից պակաս պրոտապորֆիրինօքսիդագի J₅₀ ցուցանիշ կամ 500 մկմ-ից ավելի՝ բացասական օքսիդավերականգնման պոտենցիալ:

8. Բաղադրանյութն ըստ 7-րդ կետի. *փարբերվում է* նրանով, որ որպես արգելակիչներ օգտագործում են արիլտրիագոլինոն, կամ արիլտետրագոլինոն, կամ արիլտրիագինոլինոն, կամ արիլօքսիդիագոլ, արիլտետրահիդրոնիդագոլ, արիլտետրահիդրոֆտալիմիդ, կամ արիլիդանտոին, կամ արիլուրագոլ, կամ արիլիեքսահիդրոպիրիդագին, կամ արիլիետերոցիկլային ուրեթան, կամ ֆենօքսիֆենիլային միացություն, կամ արիլպիրագոլ, կամ




բանաձեռի միացություն, որտեղ X_b հանդիսանում է O կամ S, իսկ Ph՝ տեղակալված ֆենիլ:

9. Բաղադրանյութն ըստ 8-րդ կետի. *փարբերվում է* նրանով, որ արգելակիչն իրենից ներկայացնում է ջրալուծելի աղ, կամ թթվային միացություն, որի նատրիումական աղը ջրալուծելի է:

10. Բաղադրանյութն ըստ 7-9 կետերի. *փարբերվում է* նրանով, որ արգելակիչը պարունակում է արիլային խումբ, որի տեղակալողը հանդիսանում է սուլֆոնիլամիդի կամ դրա ջրալուծելի աղի թթվային խումբ:


11. Բաղադրանյութն ըստ 10-րդ կետի. *փարբերվում է* նրանով, որ արգելակիչը հանդիսանում է



բանաձեռի միացություն:

(51) ⁶ A61K 31/505	(11) 481 A1	
(21) 000546	(22) 03.01.92	
(31) 9100039.8	(32) 03.01.91	(33) GB
9109913.5	07.05.91	GB
(86) PCT/CA 92/00001(03.01.92)		
(72) Բերնար Բեյլո, Նզհե Նզուն-Բա, CA		
(71) (73) Բիոբեմ Ֆարմա Ինկ., CA		
(74) Հ. Մանուկյան		
(54) 1,3-օքսաֆիուանի նուկլեոզիդային նմանորինակների կիրառումը հեպատիտ B-ով հիվանդ մարդկանց բուժման դեղամիջոցների ստացման համար		

(57)



բանաձեռն I-ի միացության կամ դրա դեղագործորեն ընդունելի ածանցյալի կիրառումը հեպատիտ B-ով հիվանդ մարդկանց բուժման դեղամիջոցների ստացման համար:

2. Կիրառումն ըստ 1-ին կետի. *դարբերվում է* նրանով, որ բանաձեռն I-ի կիրառվող միացությունն է *ցիտոսին-4-ամինա-1-(2-հիդրօքսիմեթիլ-1,3-օքսափոլան-5-իլ)-(1H)-պիրիմիդին-2-ոնի* կամ դրա դեղագործորեն ընդունելի ածանցյալի ռացեմատը:



3. Կիրառումն ըստ 1-ին կետի. *դարբերվում է* նրանով, որ բանաձեռն I-ի կիրառվող միացությունն է *ցիտոսին-4-ամինա-1-(2-հիդրօքսիմեթիլ-1,3-օքսափոլան-5-իլ)-(1H)-պիրիմիդին-2-ոնի* կամ դրա դեղագործորեն ընդունելի ածանցյալի (-)-էնանտիոմերը:

4. Կիրառումն ըստ 3-րդ կետի. *դարբերվում է* նրանով, որ բանաձեռն I-ի կիրառվող միացությունը գործնականորեն զերծ է համապատասխան (+)-էնանտիոմերից:

5. Կիրառումն ըստ 1, 2 կամ 3-րդ կետերի. *դարբերվում է* նրանով, որ նշված միացություններ պարունակող դեղամիջոցները նշանակում են *per os* կամ պարենտերալ:

6. Կիրառումն ըստ 4-րդ կետի. *դարբերվում է* նրանով, որ դեղամիջոցը նշանակում են դեղաչափված միավորներով, ընդ որում յուրաքանչյուր միավորը պարունակում է 10-ից մինչև 1500 մգ միացություն:

րինակ՝ Erb-b2, Erb-b3, Erb-b4, **տիրոզինկինազի արգելակման եղանակ**, ըստ որի կաթնասունը մշակում են արդյունավետ քանակությամբ բանաձեռն (I)-ի կամ (II)-ի միացություններով.



որտեղ՝

A-E-ից 1-3 ռադիկալները ազոտ են, իսկ մնացածը կամ մնացածները ածխածին են, կամ էլ A-E-ի երկու հարակից ռադիկալները N, O եւ S պարունակող խմբի հետերոատոմ են, ընդ որում մնացած երկու ռադիկալներից մեկը ածխածին է, մյուսը ածխածին կամ ազոտ:

X-ը O է, S, NH կամ NR⁷ խմբեր, որտեղ R⁷-ը 1-4 ածխածին ատոմներով ստորին ալկիլ է, հիդրօքսիլ, ամինախումբ, 1-4 ածխածին ատոմներով ստորին ալկօքսիլ կամ 1-4 ածխածին ատոմներով ստորին միաալկիլամինախումբ;

n-ը 0 է, 1 կամ 2;

R¹-ը ջրածին է կամ 1-4 ածխածին ատոմներով ստորին ալկիլ, եթե n -ը 2 է, ապա R¹-ը ածխածին յուրաքանչյուր կցված ատոմի համար անկախորեն H է կամ 1-4 ածխածին ատոմներով ստորին ալկիլ;

R²-ը 1-4 ածխածին ատոմներով ստորին ալկիլ է, 3-8 ածխածին ատոմներով ցիկլոալկիլ, 1-4 ածխածին ատոմներով ստորին ալկօքսիլ, 3-8 ածխածին ատոմներով ցիկլոալկօքսիլ, նիտրոխումբ, հալոգեն (ֆտոր, քլոր, բրոմ, յոդ), 1-4 ածխածին ատոմներով ստորին պերֆտորալկիլ, հիդրօքսիլ, 1-4 ածխածին ատոմներով ստորին ագիլօքսիլախումբ, -O-C(O)R, ամինո, յուրաքանչյուր ալկիլային խմբում 1-4 ածխածին ատոմներով ստորին միա կամ երկալկիլամինոխումբ, յուրաքանչյուր ցիկլոալկիլային խմբում 3-8 ածխածին ատոմներով ստորին միա կամ երկցիկլոալկիլամինոխումբ, հիդրօքսիմեթիլ, 1-4 ածխածին ատոմներով ստորին ագիլ, -C(O)R խումբ, ցիանախումբ, 1-4 ածխածին ատոմներով ստորին թիոալկիլ, 1-4 ածխածին ատոմներով ստորին սուլֆինիլալկիլ, 1-4 ածխածին ատոմներով ստորին սուլֆոնիլալկիլ, 3-8 ածխածին

- (51)⁶ **A61K 31/505** (11) **482 A1**
C07D 487/04
A61K 31/52
C07D 471/04
- (21) 96217 (22) 23.01.95
- (24) 25.07.96
- (31) 186735 (32) 25.01.94 (33) US
186745 25.01.94 US
358351 23.12.94 US
- (86) PCT/US95/00941 (23.01.95)
- (72) Բրիդջիս Ալեքսանդր Ջեյմս, GB, Դեննի Վիլյամ Ալեքսանդր, NZ, Ֆրայ Դեյվիդ, Կրեյկեր Ալան, Մեյեր Ռոբերտ, US, Բյուքալ Գորդոն Վիլյամ, Թոմսոն Անդրու Մարկ, NZ
- (71) (73) Վարներ-Լամբերտ Զամփինի, US
- (74) Ա. Պետրոսյան
- (54) **Աճի վերնաշկային գործոնի ռեցեպտորի տիրոզինկինազի արգելակման եղանակ**
- (57) 1. **Աճի վերնաշկային գործոնի ռեցեպտորի, օ-**

ատոմներով թիոցիկլոալկիլ, 3-8 անդամների ատոմներով սուլֆիդիցիկլոալկիլ, 3-8 անդամների ատոմներով սուլֆոնիցիկլոալկիլ, սուլֆոնամիդոխումբ, 1-4 անդամների ատոմներով ստորին միա կամ երկալկիլսուլֆոնամիդոխումբ, 3-8 անդամների ատոմներով միա կամ երկալկիլսուլֆոնամիդոխումբ, մերկապտոխումբ, կարբոքսիլ, [-C(O)NH₂] կարբոքսամիդոխումբ, 1-4 անդամների ատոմներով ստորին միա կամ երկալկիլկարբոքսամիդոխումբ, 3-8 անդամների ատոմներով միա կամ երկալկիլալկոքսիլ, 1-4 անդամների ատոմներով ալկոքսիկարբոնիլ, 3-8 անդամների ատոմներով ցիկլոալկոքսիկարբոնիլ, 2-4 անդամների ատոմներով ստորին ալկենիլ, 4-8 անդամների ատոմներով ցիկլոալկենիլ, 2-4 անդամների ատոմներով ստորին ալկինիլ, կամ երկու R² ռադիկալները անդամների հարակից ատոմների հետ կազմում են 5-7 անդամանոց կարբոցիկլային օղակ կամ միաշահագեցած 1,3-երկօքսուլանիլ, 1,4-երկօքսուլանիլ, 1,4-երկօքսետայինիլ, պիրանիլ, ֆուրանիլ, պիրոլիդիլ, պիպերիդինիլ, թիոլանիլ, օքսազոլանիլ, թիազոլանիլ, երկազոլանիլ, պիպերազինիլ, մորֆոլինա կամ թիոմորֆոլինախումբ, եւ

m-ը 0-3 է;

Ar-ը ֆենիլ է, թիենիլ, ֆուրանիլ, պիրոլիլ, պիրիդիլ, պիրիմիդիլ, իմիդազոլիլ, պիրազինիլ, օքսազոլիլ, թիազոլիլ, նաֆտիլ, բենզոթիենիլ, բենզոֆուրանիլ, ինդոլիլ, քինոլինիլ, իզոքինոլինիլ եւ քինազոլինիլ;

R³, R⁴, R⁵, եւ R⁶ ռադիկալները անկախ միմյանցից ջրածին են, 1-4 անդամների ատոմներով ստորին ալկիլ, 3-8 անդամների ատոմներով ցիկլոալկիլ, 1-4 անդամների ատոմներով ստորին ալկոքսիլ, 3-8 անդամների ատոմներով ցիկլոալկոքսիլ, հիդրօքսիլ, 1-4 անդամների ատոմներով ստորին ալկիլ, 3-8 անդամների ատոմներով ստորին ալկիլ, [-OC(O)OR] կարբոնատախումբ, որտեղ R-ը 1-4 անդամների ատոմներով ստորին ալկիլ է, կամ 3-8 անդամների ատոմներով ցիկլոալկիլ;

ուրեթիդա կամ թիոուրեթիդա կամ N- կամ O- կապակցված ուրեթան, յուրաքանչյուր ալկիլային խմբում տեղակալված կամ չտեղակալված 1-4 անդամների ատոմներով միա կամ երկստորին ալկիլով կամ 3-8 անդամների ատոմներով ցիկլոալկիլ;

1-4 անդամների ատոմներով ստորին թիոալկիլ, 3-8 անդամների ատոմներով թիոցիկլոալկիլ, մերկապտոխումբ, 2-4 անդամների ատոմներով ստորին ալկենիլ, հիդրազինախումբ, 1-4 անդամների ատոմներով N' (ստորին)ալկիլիդիդրազինախումբ, 1-4 անդամների ատոմներով ստորին ալկիլամինախումբ, հիդրօքսիլամինախումբ, 1-4 անդամների ատոմներով ստորին O- ալկիլիդիդրօքսիլամինախումբ;

կամ R³-R⁶-ից ցանկացած երկու ռադիկալը հարակից անդամների ատոմների հետ կազմում են 5-7 անդամանոց կարբոցիկլային օղակ կամ միաշահագեցած 1,3-երկօքսուլանիլ, 1,4-երկօքսուլանիլ, 1,4-երկօքսետայինիլ, պիրանիլ, ֆուրանիլ, պիրոլիդիլ, պիպերիդինիլ, թիոլանիլ, օքսազոլանիլ, թիազոլանիլ, դիազոլանիլ, պիպերազինիլ, մորֆոլինա կամ թիոմորֆոլինախումբ;

R³-R⁶-ռադիկալներից ցանկացածում ստորին ալկիլային խումբը կարող է տեղակալվել առնվազն մեկ կամ ավելի մնացորդով, ընտրված խմբից, որը պարունակում է հիդրօքսիլ, ամինախումբ, ստորին միալկիլամինախումբ, ստորին երկալկիլամինախումբ, N-պիրոլիդիլ, N-պիպերիդինիլ, N-պիրիդինիլ, N-մորֆոլինա-, N-թիոմորֆոլինա- եւ N-պիպերազինախմբեր;

Եթե A-E ռադիկալներից առնվազն մեկը ազոտ է, ապա ազոտի ատոմներից մեկին հարակից անդամների ատոմի վրայի R³-R⁶-ից ցանկացածը չի կարող լինել հիդրօքսիլ կամ մերկապտոխումբ;

ընդ որում, եթե R¹, R², R³, R⁴, R⁵, կամ R⁶ ռադիկալներից ցանկացածը պարունակում է քիրալային կենտրոններ, կամ R¹-ի նշանակությունը հանգեցնում է քիրալային կենտրոնների գոյացմանը, ապա վերը բերված բանաձևի միացությունը կարող է գտնվել առանձին ստերեոիզոմերների ձեւով կամ երկստերեոիզոմերների խառնուրդների եւ/կամ ռացեմատի ձեւով;

կամ դրա դեղագործական աղը, կամ հիդրատը:

2. Եղանակն ըստ 1-ին կետի. *փարբերվում է* նրանով, որ կիրառում են միացություն, որում X-ը NH է, n=0 կամ 1, R¹ -ը H է, Ar-ը ֆենիլ է, որը կարող է տեղակալվել B, D եւ E-ն անդամներն են, A-ն ազոտ է, R³ կամ R⁴ -ից մեկը ջրածին է, իսկ մյուսը ստորին ալկոքսիլ կամ հալոգեն:

3. Եղանակն ըստ 1-ին կետի. *փարբերվում է* նրանով, որ կիրառում են միացություն, որում X-ը NH է, n=0 կամ 1, R¹ -ը H է, Ar-ը ֆենիլ է, որը կարող է տեղակալվել B, D եւ E-ն անդամներն են, A-ն ազոտ է, R³ կամ R⁴ -ից մեկը ջրածին է, իսկ մյուսը ամինախումբ:

4. Եղանակն ըստ 1-ին կետի. *փարբերվում է* նրանով, որ կիրառում են միացություն, որում X-ը NH է, n=0 կամ 1, R¹ H է, Ar-ը ֆենիլ է, որը կարող է տեղակալվել B, D եւ E-ն անդամներն են, A-ն ազոտ է, R³ կամ R⁴ -ից մեկը ջրածին է, իսկ մյուսը ստորին միա կամ երկալկիլամինախումբ:

5. Եղանակն ըստ 1-ին կետի. *փարբերվում է* նրանով, որ կիրառում են միացություն, որում X-ը NH է, n=0 կամ 1; R¹-ը H է, Ar-ը ֆենիլ է, որը կարող է տեղակալվել B, D եւ E-ն անդամներն են, A-ն ազոտ է, R³ կամ R⁴ -ից մեկը հիդրազինախումբ:

6. Եղանակն ըստ 1-ին կետի. *փարբերվում է* նրանով, որ կիրառում են միացություն, որում X-ը NH է, n=0 կամ 1, R¹ -ը H է, Ar-ը ֆենիլ է, որը կարող է տեղակալվել B, D եւ E-ն անդամներն են, A-ն ազոտ է, R³ կամ R⁴ -ից մեկը հիդրազինախումբ:

րող է տեղակալվել, B, D եւ E-ն ածխածին են, A-ն ազոտ է, R³ կամ R⁴-ից մեկը ստորին ալկիլ է:

7. Եղանակն ըստ 1-ին կետի. *փարբերվում է* նրանով, որ կիրառում են միացություն, որում X-ը NH է, n=0 կամ 1, R¹-ը H է, Ar-ը ֆենիլ է, որը կարող է տեղակալվել, B, D եւ E-ն ածխածին են, A-ն ազոտ է, R³ կամ R⁴-ից մեկը ստորին ալկոքսիլ:

8. Եղանակն ըստ 1-ին կետի. *փարբերվում է* նրանով, որ կիրառում են միացություն, որում X-ը NH է, n=0 կամ 1, R¹-ը H է, Ar-ը ֆենիլ է, որը կարող է տեղակալվել, B, D եւ E-ն ածխածին են, A-ն ազոտ է, R³ կամ R⁴-ից մեկը ստորին ալկիլ:





9. Եղանակն ըստ 1-ին կետի. *փարբերվում է* նրանով, որ կիրառում են միացություն, որում X-ը NH է, n=0 կամ 1, R¹-ը H է, Ar-ը ֆենիլ է, որը կարող է տեղակալվել, B, D եւ E-ն ածխածին են, A-ն ազոտ է, R³ կամ R⁴-ից մեկը ամինախումբ է, իսկ մյուսը ստորին ալկոքսիլ:

10. Եղանակն ըստ 1-ին կետի. *փարբերվում է* նրանով, որ կիրառում են միացություն, որում X-ը NH է, n=0 կամ 1, R¹-ը H է, Ar-ը ֆենիլ է, որը կարող է տեղակալվել, B, D եւ E-ն ածխածին են, A-ն ազոտ է, R³ կամ R⁴-ից մեկը ստորին միա կամ երկալկիլամինախումբ է, իսկ մյուսը ստորին ալկոքսիլ:

